րելի է նրանց տեսնել կամ նրանց հետ խօսել: Բոլոր անասնական կրքերը զարթած են լինում նրանց մէջ: Նրանք սթափւում են այդ մոլեկան դրութիւնից այն ժամանակ միայն, երբ ղահոէջին նրանց լաւ կողոպտում է եւ իր անբարոյական հիմնարկութիւնից դուրս է անում, որ աւելորդ տեղ չբռնեն:

— Ի՞նչ միջոցով են փող աշխատում, — հարցրի ես:

— Ամենաստոր միջոցներով: Ես հասկանում եմ, երբ հսկայ մշեցին կամ ուժեղ շատախցին գնում է Պոլիս: Նրանք ընտրում են տղամարդի վայել աշխատութիւններ: Խաներում, մաքսատներում, նաւահանգստներում համալութիւն են անում եւ ահագին հակեր են տեղափոխում շոգենաւերից, թուլումբաջի (հրդեհաշէջ) են դառնում եւ կրակի մէջ են մտնում. նաւաստի են դառնում եւ ալիքների հետ են պատերազմում, մի խօսքով, ընտրում են այնպիսի պարապմունքներ, որի համար պէտք էր մարմնի եւ սրտի ամրութիւն եւ ծայրայեղ անձնավստահութիւն: Բայց երբ թուլամորթ, կանացաբարոյ վանեցին է գնում Պոլիս, ընտրում է պարապմունքների ամենամեղկը: Դրանք ըստ մեծի մասին գնում են մանուկ հասակներում, բերբերների (սափրիչների) աշակերտ են դառնում, սրճատներում սպասաւոր են դառնում կամ, որպէս Մինաս եւ Կարապետ «աղաների» օրինակներով ցոյց տոի, բաղանիքներում քիսաջի եւ փողոցներում բաժակներով ջուր ծախող են դառնում: Բայց աւելի փչացնում է վանեցիներին էյվազութիւնը: Գիտէ՞ք ի՞նչ բան է էյվազութիւնը, մասնաւոր տներում սպասաւորութիւն եւ առաւելապէս հարուստ մահմեդականների կամ ծառայող փաշաների տներում: Պէտք է մահմեդականների ընտանեկան կազմակերպութեան հետ ծանօթ լինել, որ հասկանալի լինի, թէ որքան գարշելի ծառայութիւն է կատարում էյվազը: Այնտեղ սովորում է թեքոել, ստորանալ, ընտելանում է յարեմական կեանքի բոլոր մեղկութիւնների հետ, այնտեղ սպանում է իր այրականութիւնը: Եւ դուք կը տեսնէք, որ նոյն փառաւոր հագնուած, վայելչադէմ էյվազը, որ բոլորին ապշեցնում է իր գեղեցկութեամբ, յետոյ, իր ծերութեան հասակում, պատառոտած հագուստով, մի կթոց ուսի վրայ առած, թափառում է փողոցներում, տներից աղբ է հաւաքում եւ, մի քանի փարայի վարձատրութեամբ, տանում է ծովն է ածում: Երկու դէպքում եւս նա ստորանում է, թեքւում է, թեքւում է աղբի ծանրութեան ներքո...

Վերջին խօսքերը արտասանեց արհեստաւորը սարսափելի դառնութեամբ: Նա շարունակեց.

— Նայեցէք այդ բազմութեանը, որ մեր շուրջը զբօսնում են եւ այդպէս անձնատուր են եղած անհոգ զուարճութիւնների, դրանք պարտքերի մէջ խեղդուած մարդիկ են: Դրանց մէջ մէկը չէք գտնի, որ իր կեանքում տասնեակ